ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՆ ՈՒ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Տիրան Գեղամի Ղարիբջանյան
Եվրոպական համալսարանի
Կառավարման ամբիոնի հայցորդ

Բնապահպանական անվտանգությունն ազգային անվտանգության բաղադրիչներից մեկն է, որը հանդես է գալիս որպես բնական, սոցիալական և այլ պայմանների ամբողջություն՝ ապահովելով տվյալ տարածքում ապրող հասարակության անվտանգ կյանքն ու գործունեությունը[1]:

Բնապահպանական անվտանգությունը ներառում է շրջակա միջավայրի (բնական ռեսուրսներ, ջուր, մթնոլորտ, հող, կենդանական ու բուսական աշխարհներ) վիճակի Նկատմամբ վերահսկողությունը և այնպիսի միջոցների մշակումը, որոնցով բացառվեն մարդու և հասարակության բնականոն կենսագործունեությանը սպառնացող բնապահպանական ճգնաժամներն ու աղետները:

Բնապահպանական անվտանգության քաղաքականությունը պետության, հասարակական կազմակերպությունների, իրավաբանական և ֆիզիկական անձանց էկոլոգիական անվտանգությանն ուղղված գործունեությունն է: Պետք է ասել, որ բնապահպանական անվտանգության համակարգը կենսոլորտի և անթրոպոգեն բեռնվածության կամ ուղղայի բեռնվածության միջև հավասարակշռության ապահովմանն ուղղված օրենսդրական, առողջապահական և կենսաբանական միջոցառումների ամբողջությունն է: Էկոլոգիական անվտանգությունը բնության և մարդկանց կենսագործունեության ու առողջության վրա վնասակար ազդեցության նվազագույն մակարդակի ապահովության միջոցառումների (կանխատեսում, պլանավորում և այլն) ամբողջությունն է, որը միևնույն ժամանակ պահպանում է արդյունաբերության, կոմունիկացիաների, գյուղատնտեսության զարգացման կայուն տեմպը:

Ըստ Ա. Շմալի բնապահպանական անվտանգության համակարգը մի մեխանիզմ է, որն ապահովում է բնական միջավայրի և մարդու վրա բնական և անթրոպոգեն էկոլոգիական վտանգի գործոնների բացասական ազդեցության թույլատրելի սահմանը[2], այն է՝

1. տարածքի ամբողջական էկոլոգիական համալիր գնահատում՝

---

[1] **Акимова Т., Хаскин В.** «Экология», М.: Юнити, 1998, сс. 27-28.

[2] **Мазур И.И.** Курс инженерной экологии / И. И. Мазур, О. И. Молдаванов, М.: Высшая школа, 1999, 447 с.

- տվյալ տարածքում ի հայտ եկող էկոլոգիական վտանգի գործոնների համալիրի որոշում և գնահատում,
- ըստ կայունության և էկոլոգիական վտանգի տարածքների գոտիավորում,
- շրջակա միջավայրի վրա ազդող օբյեկտների կադաստրի կազմում և վարում,
- բնական ռեսուրսների կադաստրի վարում,
- անթրոպոգեն բեռնվածության որոշում,
- «աղտոտված» հրապարակների կադաստրի կազմում և վարում:

2. Էկոլոգիական մոնիտորինգ՝
   - շրջակա միջավայրի վրա ազդեցության նորմավորում,
   - շրջակա միջավայրի վրա ազդեցության աղբյուրների վերահսկում,
   - շրջակա միջավայրի բաղադրիչների որակի հսկողություն:
3. Կառավարչական որոշումներ՝
   - էկոլոգիական քաղաքականության ձևավորում,
   - էկոլոգիական վտանգի անթրոպոգեն գործոնների դրսևորման կանխարգելում,
   - էկոլոգիական վտանգի բնական գործոնների դրսևորման հետևանքների նվազեցում,
   - բնապահպանական օրենսդրության և էկոլոգիական աշխարհայացքի ձևավորման մեթոդների մշակում և կատարելագործում:



Գծապատկեր 1. Բնապահպանական անվտանգության ապահովման մեթոդները[1]

[1] **Никаноров А.М., Хоружая Т.А.** Экология: для студ. вузов и специалистов-экологов, М.: Приор, 1999, сс. 16-17.

Ինչպես ներկայացվել է **գծապատկեր 1**-ում, գոյություն ունեն բնապահպանական անվտանգության 4 մեթոդներ՝

1. շրջակա միջավայրի որակի վերահսկողության մեթոդ,
2. մոդելավորման և կանխատեսման մեթոդներ, այդ թվում՝ համակարգային վերլուծության, համակարգային դինամիկայի, ինֆորմատիկայի և այլն
3. կոմբինացված մեթոդ, օրինակ էկոլոգա-թունաբանական մեթոդ, որն ընդգրկում է տարբեր խմբեր (ֆիզիկա-քիմիական, կենսաբանական, թունաբանական և այլն),
4. շրջակա միջավայրի որակի կառավարման մեթոդ:

Բնապահպանության ոլորտի խնդիրներից մեկն է հնարավորինս նվազեցնել շրջակա միջավայրի՝ մթնոլորտի, ջրերի, հողի, ընդերքի, բուսական և կենդանական աշխարհի վրա տնտեսական գործունեության վնասակար ներգործությունները՝ ապահովելով շրջակա միջավայրի և մարդու առողջության պահպանության երաշխիքները[1]: Մասնավորապես, կլիմայի գլոբալ փոփոխությունները, օզոնային շերտի քայքայումը, մեծ հեռավորությունների վրա օդի, ջրերի անդրսահմանային աղտոտումն, արդյունաբերական վթարների անդրսահմանային ներգործությունները, հողերի դեգրադացիան (անապատացում, աղակալում, էռոզիա և այլն), կենսաբազմազանության առանձին տեսակների անհետացման վտանգը տնտեսական գործունեության արդյունքն են, և դրանք ամբողջ աշխարհում առաջնային լուծում պահանջող խնդիրներ են:

Նոր համաշխարհային ռազմավարության համաձայն պետք է արմատապես փոխվի մարդկանց վերաբերմունքը տնտեսության զարգացման և տնտեսական խնդիրների լուծման ուղիների ու միջոցների նկատմամբ: Իսկ դա նշանակում է, որ ցանկացած երկրի տնտեսական վիճակը և բնակչության բարեկեցությունը ընդունված է չափվում է արտադրած նյութական բարիքներով և ստացվող եկամտի քանակով: Իսկ որքան մեծ է արտադրության ծավալը և ինչքան բարձր է բնակչության մեկ շնչին ընկնող եկամուտը, այնքան բարձր է տնտեսական զարգացման մակարդակը: Բայց և ակնհայտ է մեկ պարզ օրինաչափություն, համաձայն որի ինչքան մեծ է նյութական արտադրության ծավալը, այնքան ուժեղ է բնության շահագործումը, որ նյութական արտադրության քանակական աճը միաժամանակ խորացնում է մարդու և բնական միջավայրի միջև եղած հակասությունը, վատթարացնում բնական միջավայրի որակը, հանգեցնում է բնական ռեսուրսների նվազման և սպառման:

Եվ այդ ամենն արդյունք է բնական միջավայրի վրա մարդածին ներգործության անընդհատ ուժեղացման պատճառով: Ուստի, մարդկության

[1] ԲԽՏ/ ՀԱՇՄԱԻ 2000, «Բնապահպանական քաղաքականության առավելությունների գնահատումը», Լոնդոն, 30 Հունիսի, 2000:

զարգացումն ընթանում է միակողմանի, միայն տնտեսական աճի ուղղությամբ: Տնտեսական ցուցանիշներն անընդհատ բարելավվում են, աճում են նյութական արտադրության ծավալները, բայց և միաժամանակ քայքայվում են բնական լանդշաֆտներն ու կենսապահովման համակարգերը,վատանում են մարդկանց կյանքի և աշխատանքի բնական պայմանները,ավելանում են հիվանդությունները:

Աշխարհում տեղի ունեցող նման զարգացումները աշխարհի տարբեր գիտնականներին հիմքեր են տալիս պնդելու, որ տնտեսական աճը իրականում ոչ թե բարեկեցություն է ստեղծում, այլ՝ ընդամենը «զարգացման պատրանք»: Ավելի ակնհայտ է դառնում, որ բնության հնարավորություններն անսահման չեն, և ի վերջո, բնական միջավայրի վատթարացման ու բնական ռեսուրսների նվազման պատճառով տնտեսական աճը ընդհանրապես կարող է կանգ առնել:

Բնապահպանական անվտանգության ապահովման համար պետության կողմից կիրառվում է բնապահպանական քաղաքականության գործիքակազմ, մասնավորապես տնտեսական խթանիչների և վարչական մեթոդների միջոցով կասեցվում է արտաքին և մարդածին գործոնների բացասական ազդեցություն շրջակա միջավայրի վրա: Վերջին տարիների ընթացքում Հայաստանի Հանրապետությունում շոշափելի քայլեր են կատարվել բնապահպանական քաղաքականության, օրենսդրության և ենթակառուցվածքային բարեփոխումների ուղղությամբ: Ամբողջությամբ թարմացվել և համապատասխանեցվել է ժամանակակից պահանջներին բնապահպանության բնագավառի ճյուղային օրենսդրությունը, բայց մինչ օրս բացակայում է շրջակա միջավայրի պահպանության շրջանակային իրավական ակտը, որը կոչված կլինի կայուն զարգացման համատեքստում ապահովել բնապահպանական խնդիրների համահունչ ինտեգրումը սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրերում, ոլորտի համակարգված կառավարումը՝ շրջակա միջավայրի աղտոտման համալիր կանխարգելումն ու բնական ռեսուրսների արդյունավետ օգտագործումը: Նմանատիպ բնապահպանական օրենսգրքեր գործում են արդեն Նիդեռլանդներում (1997թ.), Շվեդիայում (1999թ.), Ֆրանսիայում (2000թ.) և այլն: 2005 թվականին մշակվել է բնապահպանական օրենսգրքի օրինակելի մոդելը Անկախ Երկրների Համագործակցության անդամ երկրների համար:

Պետք է նշել, որ բնապահպանական քաղաքականության հիմնական սկզբունքներն են[1]՝

1) բնապահպանական անվտանգության ապահովումը,

2) բնապահպանական խնդիրների ինտեգրումը սոցիալ-տնտեսական զարգացումներին՝ կայուն զարգացման նպատակով,

---

[1] Քաղվածք՝ Հայաստանի Հանրապետության կառավարության նիստի արձանագրությունից 23 հունիսի 2011 թվականի N 24: 5-րդ կետ:

3) էկոհամակարգային մոտեցումը, ինչը ենթադրում է բնական ռեսուրսների համալիր, համապարփակ կառավարման ապահովում,
4) բնապահպանության ոլորտի հասկացությունների ամրագրումը,
5) բնապահպանական օրենսդրությունը Եվրամիության օրենսդրության մոտարկման գործընթացի ապահովումը,
6) աղտոտողը վճարում է, մաքրողը խրախուսվում է,
7) բնապահպանական խնդիրների լուծման համար տնտեսական և ֆինանսական մեխանիզմների կիրառումը,
8) բնօգտագործման և բնապահպանական վճարների հասցեական օգտագործումը՝ ուղղված շրջակա միջավայրի պահպանության և բնական ռեսուրսների բնական օգտագործմանը,
9) բնօգտագործման ոլորտում էկոլոգիապես մաքուր տեխնոլոգիաների կիրառումը,
10) որոշումների ընդունման գործում տեղական ինքնակառավարման մարմինների և հանրության մասնակցության ապահովումը, հանրության իրազեկումը և տեղեկատվության մատչելիությունը,
11) միասնական տեղեկատվական համակարգի ներդրումը,
12) բնապահպանական կրթության, քարոզչության, դաստիարակության ամբողջական և միասնական համակարգի ապահովումը,
13) շրջակա միջավայրի հարցերի վերաբերյալ տեղեկատվության մատչելիությունը,
14) որոշումների ընդունման գործընթացին հասարակայնության մասնակցության ապահովումը,
15) արդարադատության մատչելիությունը:



Գծապատկեր 2. ՀՀ բնապահպանական անվտանգության կառավարման մեխանիզմը

Բնապահպանության ոլորտի խնդիրներից մեկն է հնարավորինս նվազեցնել շրջակա միջավայրի՝ մթնոլորտի, ջրերի, հողի, ընդերքի, բուսական և կենդանական աշխարհի վրա տնտեսական գործունեության վնասակար ներգործությունները՝ ապահովելով շրջակա միջավայրի և մարդու առողջության պահպանության երաշխիքները[1]: Մասնավորապես, կլիմայի գլոբալ փոփոխությունները, օզոնային շերտի քայքայումը, մեծ հեռավորությունների վրա օդի, ջրերի անդրսահմանային աղտոտումն, արդյունաբերական վթարների անդրսահմանային ներգործությունները, հողերի դեգրադացիան (անապատացում, աղակալում, էռոզիա և այլն), կենսաբազմազանության առանձին տեսակների անհետացման վտանգը տնտեսական գործունեության արդյունքն են, և դրանք ամբողջ աշխարհում առաջնային լուծում պահանջող խնդիրներ են:

Ներկայիս շուկայական տնտեսական հարաբերություններում շուկաները սահմանում են ապրանքների և ծառայությունների գները և քանակությունը: Համաձայն տեսության՝ շուկայով է պայմանավորված ապրանքների և ծառայությունների լավագույն համադրության առաջարկը և պահանջարկը, որը տանում է դեպի առավելագույն հնարավոր բարօրության (հաշվի առնելով արտադրության և սպառման սահմանափակումները):

Սակայն, շուկայում չվաճառված ապրանքների և ծառայությունների շուկայական գնի մասին ուղղակի տեղեկատվությունը հասանելի չէ, ինչը դժվարություններ է ստեղծում օպտիմալացնել նման ծառայությունների առաջարկը և պահանջարկը: Եվ սակայն գոյություն չունի հստակ սահմանված գին "անտառի", "կենսաբազմազանության" համար, ակնհայտ է, որ շատերը որոշակիորեն արժևորում են նման գին չունեցող ապրանքները և ծառայությունները[2]:

Հասարակության կայուն զարգացումը, ռացիոնալ բնօգտագործման և բնապահպանության ներդաշնակ գործունեությունը պարտադիր կերպով ենթադրում է համապատասխան կառավարման համակարգի առկայություն, որը հասարակական գիտակցության բարձր աստիճանի, օրենսդրական կատարյալ դաշտի, օրենքների ու օրինականության գերակայության պայմաններում կոչված է ապահովելու երկրի ներսում բնօգտագործման և բնապահպանության նկատմամբ պետական-հասարակական

---

[1] ԲԽՏ/ ՀԱՇՄԱԻ 2000, «Բնապահպանական քաղաքականության առավելությունների գնահատումը», Լոնդոն, 30 Հունիսի, 2000:

[2] ԲՈՒԻ, 2006, «Բնապահպանական քաղաքականության առավելությունների գնահատումը» Ֆրանս Օոստերհույսի կողմից խմբագրված (ԲՈՒԻ), մասնակցությամբ՝ Վերոնիկ Մոնիերի և Սեսիլ դը Աբբայեսի (BIO); Բենջամին Գորլակոի, Սնդրյու Յարվիսի և Ջեյմս Մեդհուրստի (GHK); Ոնոն Կուիկի (ԲՈՒԻ), Ռոբին Վանների և Պոլ Էկինսի Robin (PSI); Յոհեմ Յանցենի և Հենկ վան դեր Վոերդի (ԿԲՏԻ); Պետեր Վերկաեմստի և Ե. Մեյնաերթսի (VITO), Բնապահպանության գլխավոր տնօրինության համար, Ամստերդամ, Ապրիլ, 2006. http://ec.europa.eu/environment/enveco/ex_post/costs.pdf :

վերահսկողության ու կարգավորման հակակշիռների գործուն մեխանիզմների արդյունավետ աշխատանքը:

Բնապահպանական անվտանգությունը մեր օրերում ընդունել է ընդհանուր քաղաքական նշանակություն և միջուկային անվտանգության հետ գտնվում է նույն հարթության վրա[1]: Իսկ բնապահպանական ճգնաժամից դուրս գալու համար անհրաժեշտ է ուսումնասիրել, ճանաչել ու օգտագործել բնապահպանական համակարգի ձևավորման բոլոր հիմնարար օրենքները և բնական ռեսուրսների շահագործման ռացիոնալ մեթոդները:

ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՆ ՈՒ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Տիրան Գեղամի Ղարիբջանյան
Եվրոպական համալսարանի
Կառավարման ամբիոնի հայցորդ

Համառոտագիր

Ժամանակակից աշխարհում գնալով մեծանում են բնապահպանական պահանջները՝ դրանք համադրելով տնտեսության զարգացման հետ: Ավելին, բոլոր երկրներում կառավարման մարմինները գիտակցել են, որ անհնարին է ապահովել տնտեսական զարգացում առանց բնապահպանական անվտանգության խնդիրների լուծմամբ. այն է՝ հնարավորինս նվազեցնել շրջակա միջավայրի՝ մթնոլորտի, ջրերի, հողի, ընդերքի, բուսական և կենդանական աշխարհի վրա տնտեսական գործունեության վնասակար ներգործությունները՝ ապահովելով շրջակա միջավայրի և մարդու առողջության պահպանության երաշխիքները:

Բանալի բառեր՝ բնապահպանական անվտանգություն, տնտեսական գործունեություն, կլիմայի փոփոխություն, էկոհամակարգ, բնապահպանական քաղաքականություն:

СИСТЕМА ЭКОЛОГИЧЕСКОЙ БЕЗОПАСНОСТИ И РЕАЛИЗОВАННАЯ ПОЛИТИКА

Тиран Гегамович Гарибджанян
Соискатель кафедры Менеджмента
Европейского университета

Аннотация

В современном мире экологические требования растут, сочетая их с экономическим развитием. Более того, во всех странах руководящие органы

[1] **Կոեհլեր Դինահ** «Կորպորատիվ բնապահպանական գործունեության վերագիտակցում», Դեբորա Հ. Բեննեթ, Գրեգորի Ա. Նորիս, Ջոն Դ. Սպենգլեր, Հարվարդի հանրային առողջության դպրոց, Արդյունաբերական էկոլոգիա թերթ, Բոստոն, Մայիս 2004:

осознали, что невозможно обеспечить экономическое развитие без решения вопросов экологической безопасности, то есть, насколько это возможно, минимизировать вредное воздействие хозяйственной деятельности на окружающую среду, такой как атмосфера, вода, почва, недра, флора и фауна, путем обеспечения гарантий для окружающей среды и здоровья человека.

Ключевые слова: экологическая безопасность, экономическая деятельность, изменение климата, экосистема, экологическая политика.

ENVIRONMENTAL SECURITY SYSTEM AND IMPLEMENTED POLICY

Tiran Gegham Gharibjyanyan
Applicant of the Department of Management,
European University

Abstract

In the modern world, environmental demands are increasing, combining them with economic development. Moreover, in all countries the governing bodies have realized that it is impossible to secure economic development without solving environmental security issues; that is, to the extent possible to minimize the harmful effects of economic activities on the environment, such as the atmosphere, water, soil, subsoil, flora and fauna, by ensuring safeguards for the environment and human health.

Keywords: environmental security, economic activity, climate change, ecosystem, environmental policy.